



## Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ 2012-2013թ. ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ

1. Հայաստանի ֆուտբոլի 2012-13թթ. Գավաթի խաղարկությունն անցկացվում է օլիմպիական մրցակարգով:
2. Գավաթի խաղարկությունը սկսվում է 1/8 եզրափակչից, որին մասնակցում են Բարձրագույն խմբի 8 թիմեր և Առաջին խմբի «Ալաշկերտ» թիմը: 1/8 եզրափակչին մասնակցում են Բարձրագույն խմբի վերջին տեղը զբաղեցնող թիմը (2012թ. նոյեմբերի 5-ի դրությամբ) և Առաջին խմբի «Ալաշկերտ» թիմը:
3. 1/8 եզրափակչի խաղերը անցկացվում են 2012թ. նոյեմբերի 14-ին և 28-ին: 1/4, 1/2 եզրափակիչները և եզրափակիչը 2013թ. մարտ-մայիս ամիսներին:
4. 1/8 եզրափակչին մասնակցած ֆուտբոլիստներին 2013թ. փետրվարին այլ թիմ տեղափոխվելու դեպքում թույլատրվում է մասնակցել 2013 թվականի Գավաթի խաղարկության 1/4, 1/2 եզրափակիչների և/կամ եզրափակչի խաղերին նոր թիմի կազմում:
5. Գավաթի խաղարկության 1/8, 1/4 եւ 1/2 եզրափակիչ հանդիպումները (երկուական խաղ) անցկացվում են սեփական եւ մրցակցի դաշտերում:
6. Հաղթող թիմը որոշվում է երկու խաղերի արդյունքներով: Հավասար ցուցանիշների դեպքում առավելությունը տրվում է հյուրընկալվելիս ավելի շատ գոլ խփած թիմին, իսկ դրա հավասարության դեպքում երկրորդ խաղի ավարտին նշանակվում է լրացուցիչ 30 րոպե խաղաժամանակ՝ 2 խաղակեսով (15+15 րոպե՝ առանց ընդմիջման): Լրացուցիչ ժամանակում հավասար արդյունքի դեպքում եւս առավելությունը տրվում է հյուրընկալվելիս ավելի շատ գոլ խփած թիմին, իսկ դրա հավասարության դեպքում նշանակվում է 11 մետրանոց հարվածաշար՝ ըստ «Ֆուտբոլ խաղի կանոնների»:
7. Եզրափակիչ խաղը անցկացվում է մեկ հանդիպումով 2013թ մայիսի 8-ին: Արդյունքի հավասարության դեպքում նշանակվում է լրացուցիչ 30 րոպե խաղաժամանակ՝ 2 խաղակեսով (15+15 րոպե՝ առանց ընդմիջման): Հաշվի հավասարության դեպքում նշանակվում է 11 մետրանոց հարվածաշար:
8. Բարձրագույն խմբի առաջնության 2012թ. նոյեմբերի 5-ի դրությամբ առաջին 4 թիմերը ընդգրկվում են խաղացանկի 1/4 եզրափակչի 4 զույգերի կազմում՝ մեկական թիմ ամեն զույգի մեջ, ընդ որում 1-ին տեղը՝ առաջին զույգում, 2-րդ տեղը՝ 2-րդ զույգում, 3-րդը՝ երրորդում, 4-րդը՝ չորրորդում:
9. Նշված թիմերի մրցակիցները որոշվում են վիճակահանությամբ՝ Բարձրագույն խմբի առաջնության 2012թ. նոյեմբերի 5-ի դրությամբ 5-7 տեղերը զբաղեցնող և 1/8 եզրափակչի հաղթող թիմերից, որից հետո յուրաքանչյուր մրցափուլի համար /բացի եզրափակչից/ վիճակահանությամբ որոշվում է մրցափուլի առաջին խաղում «դաշտի տեր» թիմը:
10. Վիճակահանությանը մասնակցում են յուրաքանչյուր ակումբից (թիմից) մեկ ներկայացուցիչ: Թիմերի ներկայացուցիչների բացակայության դեպքում վիճակահանությունը կատարվում է առանց նրանց:



**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ 2012-2013թ. ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ  
Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ Ի**

2012-2013թթ. Գավաթի խաղարկությանը մասնակցող բոլոր թիմերի համար հավասար պայմաններ ստեղծելու նպատակով՝

Հոդված 2. *Նոյեմբերի 5-ի դրությամբ* բառակապակցությունը փոխարինել *Նոյեմբերի 8-ի դրությամբ, առանց 26-րդ մրցափուլի Նոյեմբերի 7-ին նշանակված «Ուլիս»-«Արարատ» հանդիպման արդյունքի:*

Հոդված 8. շարադրել հետևյալ բովանդակությամբ՝  
Բարձրագույն խմբի առաջնության 2012թ. *Նոյեմբերի 8-ի դրությամբ* առաջին 4 թիմերը ընդգրկվում են խաղացանկի 1/4 եզրափակչի 4 զույգերի կազմում՝ մեկական թիմ ամեն զույգի մեջ՝ *վիճակահանությամբ:*

Հոդված 9. *Նոյեմբերի 5-ի դրությամբ* բառակապակցությունը փոխարինել *Նոյեմբերի 8-ի դրությամբ*

Մրցումների կազմակերպման և անցկացման բաժին